

*Խորհրդակցություն մարզպետների մասնակցությամբ, 22.01.2015*



Հունվարի 21-ին ՀՀ ՏԿԱԻ նախարար Ա. Երիցյանը խորհրդակցության էր հրավիրել ՀՀ մարզպետներին: Օրակարգի հիմնական հարցերը վերաբերում էին՝

- ՀՀ համայնքային 2014 թ. բյուջեների կատարմանն ու 2015 թ. բյուջեների հաստատմանը.
- վարչական հսկողության 2015թ. աշխատանքային ծրագրին.
- ՀՀ համայնքների տեղեկատվական բազայի թարմացմանը.
- մարզպետարանների ենթակայության տակ գտնվող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվելիք վերաբաշխումներին.
- համայնքների խոշորացմանը.
- մարզերին հատկացված պարարտանյութերի, դիզելային վառելանյութի և սերմնացուների դիմաց ունեցած պարտքերին.
- ԵՏՄ անդամ պետությունների տարածքներում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների կողմից աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մանրամասներին:

Խորհրդակցության սկզբում ՏԿԱԻ նախարար Ա. Երիցյանը նշեց, որ մարզպետների հետ իրականացվելու է ամենօրյա աշխատանք, և ինքն անձամբ մասնակցելու է յուրաքանչյուր եռամսյակ անցկացվող մարզային խորհուրդների նիստերին: Դիմելով մարզպետներին՝ Ա. Երիցյանը մասնավորապես հորդորեց ավելի սերտացնել աշխատանքը քաղաքապետերի ու գյուղապետերի հետ, և խոստացավ այցելել բոլոր համայնքներ՝ տեղում ծանոթանալու առկա խնդիրներին:

Օրակարգային հարցերի շարքում նախարարին ներկայացվեց ՀՀ համայնքների եկամուտների հավաքագրման 2014 թ. հաշվետվությունը: Դրա համաձայն՝ 2014 թ. ՀՀ համայնքների բյուջեների փաստացի մուտքերը նախատեսված 115,340,102 հազար դրամի դիմաց կազմել են 113,985,069 հազար դրամ (կատարողականը՝ 98.8%): 2013 թ. համեմատությամբ՝ եկամուտներն աճել են 7.9 %-ով կամ 8,344,610 հազար դրամով: Ընդամենը սեփական եկամուտները (այսինքն՝ առանց պաշտոնական դրամաշնորհների) նախատեսված 33,797,265 հազար դրամի դիմաց կազմել են 33,241,506 հազար դրամ (կատարողականը՝ 98.4 %): 2013 թ. համեմատ՝ սեփական եկամուտների հավաքագրումը աճել է 10.2 %-ով կամ 3,082,443 հազար դրամով: Ընդ որում՝ ընդհանուր ցուցանիշով 2012-2013 թթ. համեմատ աճ է գրանցվել բոլոր

մարզերում:

ՏԿԱԻ նախարարին զեկուցեցին նաև, որ Վարչական հսկողության 2015 թ. աշխատանքային ծրագրի համաձայն՝ նախատեսվում է տարվա ընթացքում հսկողություն իրականացնել 10 մարզի 311 համայնքում: Այս տարվա 1-ին եռամսյակում հսկողություն է իրականացվելու 67 համայնքում:

2015 թ. հունվարի 2-ից սկսած, Եվրասիական տնտեսա-կան միության անդամ պետություններում (Բելառուս, Ղազախստան, Ռուսաստանի Դաշնություն) աշխատելու համար ՀՀ քաղաքացիներից չի պահանջվում ունենալ թույլատվական բնույթի որևէ փաստաթուղթ, այդ թվում՝ պատենտ: ԵՏՄ անդամ պետությունների տարածքներում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների կողմից աշխատանքային գործունեություն ծավալելու պայմաններին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

ՀՀ ՏԿԱԻ նախարարության պաշտոնական կայք